

ՀԱՎՈՒՄԻ ԳԻՇԵՐ

Թող լռե՛ս այլեւս քնարը .

Ի՞նչ հարկ երգել սէրը, աշխարհն ու ներաշխարհը,

Ձոյգ երկրագունդերուն փլուզումը սրտի մը մէջ,

Երգել մութն անտառներուն եւ լոյսն երկնքին,

Երգել ծովն ու անոր կենդանի շունչը,

Երբ ասպարակիր կոհակները շարք առ շարք,

Նման պնդակազմ ջոկատներու

Կը թաւալին սեւաթորմի եւ հուժկու՝

Ամպերով յոգնախուռն եւ մառախուղով ծանրաբեկ

Դէպի ափունքներն բաղմահնչուն .

Թող լռե՛ս այլեւս քնարը :

Ահ, այս քնարը, աղբիւր տանջանքի,

Յաւի եւ յուսահատութեան,

Որուն հետ օրէ օր, ամսէ ամիս եւ տարուէ տարի,

Ապրեցայ մինակ եւ տաժանադին,

Որուն հետ բարձրացայ սարերը,

Ճանչցայ աշխարհն յոյգերուն եւ լուսերանդ

Ապարանքներն երազին,

Բայց այս բոլորէն, աւա՛ղ, ինձ մնաց միայն

Կարօտն անհասանելիին, մահն ու մոխիրը

Բոլոր երկրաւոր եւ երկնային գեղեցկութիւններուն .

Թող լռե՛ս այլեւս քնարը :

Դուն որ, ո՛վ նմանս, կը նախանձիս բախտիս,

Որովհետեւ քնարահար եմ տեսլահար,

Դուն որ կ'ափսոսաս որ չունիս

Իմ երգերուն դաշն ու կշռոյթը,

Եթէ գիտնաս որքան երջանիկ ես,

Չծնած ըլլալուդ համար ինձ պէս

Ընտանի ցաւին, մտերիմն ու ճաշակողը

Տարակոյսին, անձկութեան եւ անդոհանքին,

Եւ ամէնօրեայ հիւրն ու հիւրընկալը՝

Անպիտան մահացումներուն .

Թող լռե՛ս այլեւս քնարը :

Թող լռեն յուզումները, աղանեկերպ

Ներշնչումները թող փչեն առյաւէտ

Իրենց թեւերն ու թռիչքը,

Որովհետեւ այս ամէնէն, ամէնէն՝

Ինձ վիճակուեցաւ անժպիտ անտիրութեան

Մոռացօնքն ու մենութիւնն անկորական,

Որոնց աւազուտ տալիստաններուն մէջ,

Իմ բախտս ու իմ ճակատագիրս

Կը չըջին անընկեր եւ անհաղորդակից՝

Ուրախութեան, լոյսին եւ յոյսին .

Թող լռե՛ս այլեւս քնարը :

Ո՛վ գիշեր, գիշեր ծաւալուն եւ հոսանուտ,
Ո՛վ մեղմընթաց լուսիւն շողազարդ ափունքներու,
Ո՛վ անպարագիր տարածութիւն
Երկնի եւ երկրի,
Ո՛վ դուն ուլկեան լոյսի,
Որ կը հեղուս մթնոլորտէն դէպի ծովը,
Քաջէ այլեւս ուռկանդ հողոյս բացաստաններէն,
Որովհետեւ քու քաղցրութեան,
Քու անմեկնելի թովչութեան եւ սիրազեղութեան մէջ
Կայ հեծկտուքը միայն դալկադէմ տխրութեան .
Թող լռե՛ս այլեւս քնարը :

Ո՞վ էք դուք որ կը յածիք
Իմ գիշերամուտ խոհերու շուրջ,
Մտապառկերներ բանաստեղծական առաւօտներու,
Եւ լուսաղուարճ երեկոնք անուրջի .
Ո՞վ էք դուք որ կ'որոնէք
Լուսամուտներն իմ հոգւոյն,
Ուրկէ իմ պատանի կեանքիս այդարացին,
Կը զմայլէի երկնքը, հողն ու կանաչ ծովը,
Երբ գերեքջանիկ եւ ազատ
Կը չըջէի կայքէ կայք եւ դռի՛հէ դռի՛հ,
Երազելով բաց ծովն ու հառաչն իր ողբերգական :

Ահ, , ծովը, ծո՛վը, երկնանման ծո՛վը,
Ծովը մարդարտահունչ եւ վայրազ,
Ծովը անյաղթելի եւ քաջակորով,
Որ հիմա, լուսնին տակ, լուսնով ընդդողեալ,
Կը կենդանանայ լայնալիք եւ մեծաչօնդ
Պանդալաութեանէ բոնուած ամբոխի մը նման .
Բոլոր ալիքները, խումբ առ խումբ,
Ինքնազլուխ բոլոր յառաջադացումները շարք առ շարք,
Ու անխափանելի բոլոր պոռչաւորները խելակորոյս,
Իրենց չեփորները բարձրացուցած գիշերին մէջ,
Կը խուժեն դէպի ափունքները :

Օ՛, ափունքները կ'արթնան,
Կ'արթնան ապառաժուտ ներքնուղիները,
Կ'արթնան հովին մէջ կանդուն շոճիները,
Երբ ծովուն տենդն ու կորովն անսպասելի,
Իրենց մարտահրաւէր չեփորները հնչեցնելէն՝
Կը դիմեն մեծախոր առանձնութեան վրայ .
Ու հիմա, գիշերին մէջ, կրակէ լեզուներ կան,
Կան կրակէ ւրդեր եւ աղաղակներ,
Եւ աղեխարշ կոծկոծումներ եւ ճիչեր,
Որոնք նման են կեանքի եւ մահուան
Սահմաններուն վրայ լսուող հոնդիւններուն :

Քարաժայռերուն վրայ, ծովն անգուպելի եւ հզօր,
Ներկայ է իր շառաչով հաղարամեայ,
Ներկայ է իր սոսկալի խառնուածքով,
Իր կրքերով հրեղէն եւ իր խօսքերով անհաշտ .
Բայց, սիրելի է յոյժ եւ յոյժ ցանկալի,
Երբ փափուկ աւազուտին վրայ,

Իր կանաչ մարակները շաշեցնելն,
 Կը վազցնէ իր երիվարներն սպիտակ,
 Իր երիվարները, մերկերան աւ արու,
 Իր երիվարները, գեղեցիկ աւ թարմ,
 Իր երիվարները, միշտ երիտասարդ եւ միշտ չքեղ:

Վաղեցէք երիվարներ, վաղեցէք դուիւնէն,
 Դունչերնիդ փրփրուն եւ թռքերնիդ լիառատ,
 Վաղեցէք հովին մէջ ցանուցիր կրակներուն մէջէն,
 Վաղեցէք հրահրելով անտառ եւ միջոց.
 Օ՛, ձեր սմբակներուն կարծր թնդիւնը,
 Որ խուլթերէն վեր կը պայթի միջոցին մէջ,
 Օ՛, ձեր մարմնին աղեղնաւորումը հրաշագեղ,
 Եւ անոր կատարելութիւնը խռովիչ,
 Օ՛, ձեր նայուածքը խորունկ եւ խօսուն,
 Երբ կը կանգնիք ժայռերուն վրայ, ու հեւալէն
 Կը դիտէք մայր ծովուն հեռացող հեռունքը:

Վաղեցէք երիվարներ, վաղեցէք,
 Ծովափունքն ամբողջ եւ անտառներն չրջակայ,
 Ողբերութեան մէջ են ու խրախճանքի,
 Կարծէք, ձեր պայտերուն մուծերուն տակ,
 Կ'արթննայ չին դարերու ոգին,
 Ու ասպետներ ուղղաւորեն եւ տիպաճոճ,
 Ու չաստուածներ քաջալանջ եւ կնասէր,
 Իրենց հաստամետ վահանները շարժելով,
 Կ'անցնին խաւարին եւ լոյսին հորիզոններէն,
 Մինչ նաւաստիներ, իրենց քաջտիներուն բարձունքէն,
 Կ'ողջունեն հողը:

Օ՛, հողը, հողը, հովը.
 Հողը՝ համայնակուլ եւ յարաստեղծ,
 Հողը՝ լի մահուամբ եւ երկունքներով,
 Հողը՝ գետերով, հարուստ՝ օգոստափառ.
 Անտառներու վիթխարի մեկուսացումներով,
 Հողը՝ որուն կուրծքին մէջ եւ կուրծքին վրայ
 Կը հանդէժ մարդը, կ'ատէ ու կը սիրէ մարդը,
 Հողը՝ որուն մէջ մեր սնափառութեանց ոսկին
 Կ'ըլլայ փոշի, կ'ըլլայ ցնորք եւ ունայնութիւն,
 Հիմա, համակ թրթռացում եւ խայտանք,
 Կը սպասէ ծովուն, իր սիրական ծովուն:

Ու լուսնկայ դիչերին մէջ,
 Աջէն ու ձախէն, գեղապաճոյճ զգեստաւորուած,
 Ալիքները դարձեալ կը դիմեն
 Կիտալոյսով սքողուած դէպի մայր հողն անխմանալի.
 Սրտագեղման եւ ողջոյններու այս ի՞նչ ջամբում,
 Այս ի՞նչ գրկախառնում, ո՛վ կեանք,
 Այս ի՞նչ վերադառնում յուզմանց եւ կարօտներու,
 Ո՛վ դիչեր, որ երկնի եւ լեռներու բարձունքէն,
 Քու թաւշալի թեւերդ չողածածուկ ափերով
 Կը հսկես սիրոյն, գեղեցկութեան եւ չուրջափառ
 Բոլոր քաղցրութեանց եւ երանութեանց վրայ:

Դարձեալ քեզի հետ եմ, ո՛վ դիչեր,
 Ծովով խռովուն եւ հողով վերակենդանացեալ
 Անհունադէմ եւ անծայրածիր դիչեր,
 Գիւլեր սիրոյ, չարչարանքի եւ յղացումներու.
 Ծովն ի՞նչպէս խորունկ կը հառաչէ խաւարին մէջ,
 Եւ չոճիներն ի՞նչպէս կ'երազանան երբ լոյսդ
 Անոնց վերեւ կը տարածուի ջինջ եւ հեշտոլոր.
 Եւ ծովն ի՞նչպէս իր ոյժին եւ ահագնութեան մէջ
 Կը լեցուի քեզմով, եւ քեզմով շատացած՝
 Կը շրջի հեռաւորութենէ հեռաւորութիւն, իր ուղղակի
 Հնչեցնելով ամէն կոհակի խորտակման եւ յաղթանակին մէջ:

Հողմոտ ծովն ու հողը դիչերահեղձ.
 Երկունքն ալ կենդանի, բարախուն եւ վառ,
 Երկունքն ալ պատրաստ ընդառաջելու դէպի իմ դուրդուրանքս.
 Ու իմ հոգիս իրենց առջեւ, իրենց վերեւ եւ իրենց մէջ
 Լի մշտանորոգ եւ մշտայոյլ
 Համերգութիւններու թեւատարած ալիքներով.
 Ալիքներ՝ փրփրախառն եւ հնչեղ,
 Ալիքներ՝ կայտուն հովուն շարժումներէն,
 Ու քամիներ, որոնք իրենց խօլութեամբ ասերաասան՝
 Կը մղեն յառաջ ծովն անդնդախոր, թաւալուն՝
 Գիւլերին խաւարին մէջ անհեթեթ:

Ա՛լ սանձէ երիվարներդ, ով ծով,
 Ծով՝ պնդադուլիս եւ յամառ.
 Սանձէ կրքերդ, թող խաղաղութիւնն ու երազը
 Վերադառնան առ իս,
 Թող արիւնն հանդարտի եւ խրոխտ սիրտը
 Իր լեռնապարեղէն իջնէ իր դաշտավայրերը.
 Թող վերադառնան անուրջներն պատանութեան,
 Երբ անքնտել եւ անհոգ,
 Կը շրջի հովտէ հովիտ եւ դաշտէ դաշտ,
 Երգելով ջուրը, ջուրին վաղքն ու անոր փայլը,
 Երգելով սէրը, սիրոյ ցաւն ու ցաւին սէրը:

Վերադարձիր անդունդներուդ, ո՛վ ծով,
 Կուռազան, յաւէտ միճող եւ աղմկող
 Ծով՝ անտանելի, երկնցած քու մթազոյն
 Վիհերուդ մէջ շնթուկէ ու լո՛ւէ՛.
 Լո՛ւէ քարերու եւ անապատներու լուրթեամբ,
 Լուրթեամբը գերեզմաններու եւ լեռներու,
 Լուրթեամբը երկինքներու մահական,
 Ու անչափելի այն լուրթեամբ՝
 Որ պատերազմի եւ խորտակման դաշտերուն վրայ
 Կը տարածուի յանկարծահաս եւ ծանրօրէն,
 Երբ պարտեալն է ծունկի եւ ողորումն հանգած:

Վերադարձիր անդունդներուդ, ո՛վ ծով.
 Յոգնած եմ դեղեցկութենէդ, մանաւանդ
 Իրիկնամուտի շողերով փալիլուն այն ծախանքներէդ՝
 Որոնք օրօրուն ու մեղկ ուժասպառ կը դիմեն
 Դէպի քարաժայռերուն կայտառ առնութեան.
 Վերադարձիր անդունդներուդ. փշրէ՛ առ յաւէտ

Շեփորներուդ պողպատն ու ամեհի
Այն մուռնչներդ՝ որոնք անցեալին, գերեցին դիւ.
Ա՛լ պէտք չունիմ հրաւերիդ, գիշերաշրջիկ կին դու,
Անգոյն սէրերու դժբախտ պշրուհի:

Քու սիրոյդ տանջանքն ա՛լ ձերբադատուած,
Ա՛լ ձերբադատ յուզումէն ու ներշնչումէն,
Ձերբադատ անտառներու իմ սէրէն,
Եւ անոնց մէջ եւ անոնց վերեւ հրեղէն թեւերով
Սուրացող քամիներէն,
Ձերբադատ մտածման կրակներէն,
Եւ մոխիրէն հոյակապ անուրջներու,
Կըղձամ ընկղմիլ լուսթեան մը մէջ
Որուն թեւերը ծածկեն սրափալով՝
Ամէն իմացութիւն եւ կեանք,
Ամէն իրականութիւն եւ երազ:

Լուսթիւն մը մահուան պէս տիեզերական,
Ինքնիշխան եւ անբռնարարելի,
Լուսթիւն մը ամբիժ կուտութեամբ,
Անմարդկային լուսթիւն մը,
Հզօր, անսիրտութիւն եւ տեւական.
Լուսթիւն մը մոռացութեան համար եւ ցաւերու,
Անմարդարեակ լուսթիւն մը, որուն մէջ
Ծաղկէին իմ մտքերս, որուն մէջ
Միայն նոճիներն ապրէին սպալէն,
Ուր լսուէին միշտ եւ ամէնուրեք
Մեղապարտ մարմնոյս հծծիւնները հոգւոյս մէջ:

Հասած կեանքիս միջօրէին,
Ամէն ինչ ինձ կը թուի ունայն եւ ընդունայն.
Սին հպարտութիւններն ու կեղծիքներն նողկալի,
Հարստութեան տենչն ու որոնումն սխառքի.
Միայն երկինքն է մաքուր, անեղծ եւ տենչալի,
Միայն լոյսն անսխառքի եւ ալիքն արդար,
Միայն մայր ընտելեան կապտաւուն
Լճերն ու առուակներն երդեցիկ,
Ու թարմապեղ արշալոյսն ու վերջալոյսներն,
Որոնք վայելչապեղ եւ չնորհալի
Կը ծնին ու կը մեռնին հորիզոնին դախտին վրայ:

Օ՛, ինչ հզօր անկապտելի մտածում,
Կեանքին մէջ սիրել մահը, տենչալ եւ փնտուել մահը.
Ամէն չնչաւոր էակի մէջ տեսնել միայն դայն,
Թուզող թեւին մէջ տեսնել անշարժութիւնը,
Տեսնել մութը գեղեցիկ աչքի մը մէջ,
Ափսոսալ որ սա էակը չնաշխարհիկ,
Որուն յառաջացումը համակ սէր է, կեանք ու թնդիւն,
Որուն նայումները բարձր են ինչպէս լեռները,
Որուն խօսքը կը դիւթէ քեզ ու կը լուսաւորէ,
Որուն համբոյրին համար պիտի տալիք քնարդ ու քերթուածը՝
Ուրիշ բան չէ եթէ ոչ մահուան վայրկենական դարթում մը
[միայն:]

Օ՛, մահ անմահական,
Ո՛րքան ճնշիչ է ներկայութիւնդ կեանքին մէջ.
Ամէն տեղ ուր ան կը շնչէ ներկայ եւ դուն.
Ամէն բարձունքի վրայ եւ ամէն խորխորատի մէջ
Քու զօրականներդ են միշտ դրօշն ի ձեռին.
Քեզ ընկճելն է անհնարին, ո՛վ ուզմիկ,
Ո՛վ փերհզօր տիրակալ եւ արքայ ամենայնի.
Քու հաստատաւայրդ չէ միայն շիրիմն ու հողը,
Բոլոր հրճուանքներուն մէջ, բոլոր սէրերուն վրայ,
Երիտասարդական բոլոր յախուռն բարոսացումներուն դի-
Քու դրօշդ է պարզուած եւ իջած քու ստուերդ: [մաղէմ]

Ո՛ւր կ'երթանք այսպէս, անդեկ եւ անառաջնորդ,
Ո՛ր կամքին ստրուկն ենք եւ ո՛ր առաջադրութեան արքան.
Խառնարանի մը մէջ, յորձանուտ եւ երկնամուղ,
Կայրին հողինները մարմնական անկումներու մէջ.
Բոլոր առաքինութիւնները կու լան որբացած,
Բոլոր սկզբունքները գերին են շահին եւ հաշիւին.
Հոյակապ կին մը, իր կուրծքին գեղեցկութեան վրայ՝
Կը խորտակէ ամբողջները մեր բարոյականին.
Անլուսին եւ անասող գիշերի մը մէջ,
Ո՛ւր կ'ուղղուին մեր քայլերը,
Եւ ուրիշ՝ այս հրաւերը այս կոչն ու այս հրամանը:

Ահ, համայն աշխարհը բանտ է.
Բանտի մէջ են մեր կամքն ու ազատութիւնը.
Մեր բոլոր բարոսացումները ցնորք են ու մոլիս,
Մեր բոլոր յոխորտանքները փրփուր մն ու փռչի.
Տէ՛րն կը կարծենք լլլալ աշխարհի,
Անոր իշխանն ու ամենակա՛լը. վայրկեա՛ն մը,
Հիմա կը հասնի մեծ հողմը, կը հասնին
Գիշերն ու մահն յաւերժական,
Որոնք իրենց հոլովոյթին մէջ
Ընդոստ կ'առնեն, կը տոչկեն ու կը տրորեն
Քու ոչնչութիւնդ, անմիտ ու ցնորակո՛ծ մարդ:

Մահն ոչինչ ունի սպիտակաւ եւ սահմոկեցուցիչ,
Ինչ որ տխուր է եւ անսիրտական
Այն է՝ որ ա՛լ պիտի չտեսնեմ լոյսը,
Երկինքն զարդարուն աստղերով,
Եւ մշտարթուն ծովը անհորիզոն,
Լեռներն անխախտելի փոթորիկին մէջ,
Թէ պիտի չտեսնեմ ո՛վ սէրս, աչքերուդ
Անստուեր լուսարացը սրտիս վրայ,
Թէ պիտի չլսեմ, աւա՛ղ,
Ծանրաթաւ համանուագն հողմերուն՝
Ուր ծառերն են խիտ եւ ամայութիւնը բացարձակ:

Ունայն, ունայն. աւա՛ղ, ինչ շուտ կը սահի կեանքը,
Ինչ շուտ կը խամրին խանդավառութիւններն ու երազները,
Ինչ շուտ կը լուս դուն, սիրտ իմ քաղցրիկ,
Եւ դուն քնար սիրելի,
Ինչ շուտ կը տենչաս որ դադրին
Լարե՛րդ յուզելէ, որոնց ծոցին մէջ

Կ'ապրէին սէրերս, որոնց ծոցին մէջ,
 Լուսկեաց գիշերներուն, սիրոյս սոխակները,
 Կ'երգէին վարդաստանէ վարդաստան,
 Մինչ ես, նուազուն ստուերներու ծոցին,
 Կ'երազէի քեզ, միայն քեզ, ո'վ քերթութիւն:

Ինչ քաղցր է, խոր եւ համակուն,
 Այս մեղամաղձոտութիւնն ու տրտմութիւնը,
 Այս առանձնութիւնն որ իր թեւերով խոնաւ
 Կը պարուրէ զիս իբրեւ քոյր մը հոգեգրաւ:
 Արդ, յիշատակներս բոլոր, եւ յուզումներս հովուական,
 Կը վերադառնան առ իս. ո'վ մանկութիւն,
 Ո'րքան սիրուն է դէմքդ եւ ժպիտդ,
 Եւ քու պատրանքներդ ո'րքան ճոխ ու լուսեղ
 Ո'վ պատանութիւն. ո'րքան առոյգ եւ տենդազին
 Քու քալումքդ ցաւին եւ զրկանքին մէջէն,
 Երկնարնակ ո'վ երիտասարդութիւն:

Բայց ժամանակն է որ լուսն ալբեա.
 Ահա գիշերը կը հասնի եւ կը ծագի այգը.
 Ահա վերջին ամպը սահեցաւ վերջին բերան կատարէն.
 Ահա երկինքը ամբողջովին մերկ է.
 Մերկ են շուրջներն արշալոյսին մէջ,
 Մերկ են դաշտերն ու արահետները.
 Ու Երկին եւ երկրի պարապութեան խորունկէն
 Կ'անցնի լուսնիւնը, լուսնիւնը, լուսնիւնը.
 Ամէն ինչ, արդ, իրականութիւն է անիրական,
 Ամէն ինչ կախարդանք եւ յափշտակութիւն,
 Ահ, լուսն, լուսն, այս հրաշքին առջեւ եւ մաքրագործու-
 թեան:

Մոռնանք վայրկեան մը մահը,
 Այս փառքին, այս չքեղութեան, այս անկրկնելի
 Մեծավայելչութեան առջեւ. կ'արժէ վայրկեան մը մոռնալ
 Հիմա, հողին վրայ եւ երկնի մէջ, [մահը.
 Կ'արարչագործէ Աստուած.
 Փառք Քու հրաշագործութեան, ո'վ Տէր,
 Փառք Քեզի, որ կու տաս ինձ, մեղաւորիս,
 Այս արշալոյսն ու օրն այս երանական,
 Այս առանձնութիւնն որուն մէջ,
 Կ'ապրի անբարբառ լուսնիւնը. այո',
 Կ'արժէ վայրկեան մը մոռնալ մահը:

Լիտոյ Տի Քամայորէ, 18. 8. 1956

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՅԱՐԳԱՆՔԻ ԲԱԺԻՆ

Դ Ե Ր Ե Ն Ի Կ Դ Ե Մ Ի Ր Ճ Ե Ա Ն

Գրական աշխարհի աւագ սերունդի հըս-
 կայ կաղնի մը կը տասպալի Երեւանի մէջ,
 անցեալ Դեկտեմբերի 7ին: Դերենիկ Դե-
 միրճեան կը մեռնի՝ դրիշը ձեռքին մէջ,
 կիսաւարտ ձգելով իր մեծ վէպը, Մեսրոպ
 Մաշտոց: Ու այս՝ կրկին ցաւ է մեզի:

1877ին ծնած է ան Ախալքալաքի մէջ:
 Ծննդավայրին եւ Արտասանի մէջ կատա-
 րել է վերջ իր նախնական ուսումները, ա-
 շակերտած է Գեորգեան ձեռնարկին,
 1892ին, ապա Թիֆլիզի Ներսիսեան
 վարժարանին, զոր կ'աւարտէ 1897ին:
 Եւ արդէն իսկ ծանօթ է հրապարակի վը-
 րայ: 1893էն սկսած կ'աշխատակցի Մուրմ
 եւ Տարագ թերթերուն:

1897ին կը գտնենք զինք Ժընևի հա-
 մալարանի գրականութեան դասընթացը-
 ներով դրաղած. միաժամանակ ջութակի
 սիրահար:

1910ին կ'անցնի Թիֆլիզ, ուսուցչական
 ամպրոնէն հայ մանուկներու դաստիարա-
 կութեան նուիրուելու:

Իբրեւ խոստումնալից բանաստեղծ մը
 երեւան կու գայ 1898ին տալով իր երա-
 խայրիքը, Բանաստեղծութիւններ խորա-
 գրով. նոյնին Երկրորդ հատորը 1912ին:
 Կը մշակէ թատերական եւ երգիծական
 սեռերը, տալով կարգ մը թատրոններ.
 ունի բազմաթիւ յօդուածներ, ապաւորա-
 պաշտ էջեր, անհամար պատմութեանքներ:
 Իր հատորներուն թիւը 50ը կ'անցնի:

Իր գլուխ գործոցն է վարդապետ Գեորգեանի
 պատմական վէպը, երկու հատորով, հրա-
 տարակուսած 1943/6ին, վերահրատարակ-
 ուած 1954ին. վերջերս ալ Գահիրէ ՅՈՒ-
 ՍԱԲԵՐԻ տպարանէն: Ասով էր մանաւանդ
 որ ստացաւ այն մեծ ժողովրդականու-
 թիւնը եւ համազգային համբաւը:

Դերենիկ Դեմիրճեան մեր գրական պան-
 թէոնի փայլուն աստղերէն էր, որու մահը
 կը սղանք խոր կսկիծով:

Շ Ա Ի Ա Ր Շ Մ Ի Ս Ա Ք Ե Ա Ն

Սուգերով փակած էինք նախորդ տա-
 րին: Եւ այս ի՞նչ ահաւոր աղէտ կը գոռօթ
 Յառաջը, Յունուար 26ին: Շաւարշ Մի-
 սաքեան ոչ եւս է: 73ամեայ էր ան. եւ
 ստեղծ էր իր գործին նայէինք, անտարա-
 կոյս քառասնամեայ պիտի կարծէինք:
 Միայնակ՝ ամբողջ խմբագրական կազմի
 մը դերը կը կատարէր, իր զանազան ճիւ-
 դերով:

Սերաստացի, եռանդուն հայրենասէր,
 խանդավառ յեղափոխական, ազգային
 գործիչ, գրագէտ, եւ հուսկ՝ անգուղա-
 կան հրապարակագիր. Արծրունիի եւ
 Զարդարեանի յաջորդն էր արժանաւոր:

Անմոռանալի են մանաւանդ իր ամէն-
 օրեայ խմբագրականները, իրենց պիտի ու
 մաքուր աշխարհաբարով, որով ան երկար
 առնէր դարձած էր արթուն պահակը Մե-
 ծաւրանէին: Ազգապահպանումի հարցեր,
 յորեմիական տարեգարծներ, հայագիտա-
 կան խնդիրներ կը կազմէին անոնց լիտեր:
 Եւ միշտ թարմ, միշտ հաճելի, զիւրապահ
 իր ոճով եւ սրամիտ ակնարկներով:

Խմբագրականներու կողքին՝ նոյնքան
 հետաքրքրութեամբ կարդացուած սիւնակ-
 ներ, Օրը օրին, Ծուռն ու շիտակը, կը
 յայտնաբերէին Միսաքեանի տաղանդին
 բազմակողմանի բեկբեկումները. քաջա-
 լերանքի խօսքեր եւ զնահատանք, բայց
 յաճախ նաեւ հրապարակային ձաղկում
 եւ քննադատութիւն, անոյցին հետ նաեւ
 դառնը, կու գային համեմել այդ էջերը,
 որոնք այժմէական հարցերու դարձնոց մըն
 էին իրապէս: Յաճախ խորագրերն էին իսկ
 քանդակիչ ու բիւրեղացած պատգամներ
 էին իմաստնալից:

Յառաջի երեսնամեայ հատորները կը
 կազմեն անմահ կոթողը իր բարձր տա-
 զանդին, անխորտակելի կորովին:
